




ՀԱՆԴԵՍ

40 ՓԱՐԱ

ԱՅԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓԱՐԱ 40

ԾԱՂԻԿ շաբաթը երկու անգամ կը հրատարակուի Զորեհար-
ի եւ Շաբաթ օրերն: — Տարեկան բաժանորդագրութեան գինն է
100 դրո արծաթ: — Վեցամսեայն 50. — Գաւառաց համար 115 դրո.
1 եցմսեայ 60. — Ծանուցման տողը 5 դրշ.

Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել.
Առ Արսօնաւոր եւ Տնօրէն Անտոն Սափաեան,
Էսկի Զապրիյէ ճառատեսի Նշան Է.Ֆ. Պէրպերեանի Տպարանն
Խմբագրութեան յանձնուած գրութիւնք եւ չեն տրուիր:

Թ Ի Ի 226 Գ . ՏԱՐԻ

1889

ՅՈՒՆԻՍ 24 ՇԱԲԱԹԱ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աղգային. — Հէք ուսանողը. — Արտաքու
կարգի կախարդութիւն. — Հոգսանիք. — Ֆի-
լոսոփա տիր վոլգուաթ. — Մարդի քաղ:



Կը լսեմք թէ, Բերա Զէշմէ փողոց,
Վենետիկի Միսթարեան հարց վար-
ժարանին տարեկան քննութիւնք սկը-
սեր են կատարուիլ:

Այս առթիւ գոհութիւնն և ուրա-
խութիւնն կը յայտնեմք և կը շնորհա-
ւորեմք միանգամայն վարժարանին տե-
սուչ Հայր Գրիգորիոս Վ. Մէրճանեա-
նըն, որ իւր քրանաթօր աշխատու-
թեանց արդիւնքը պարգեւու և փա-
ռաւորութեան պատիւը պիտի վայելէ
վերջապէս:

Վաղը ինչպէս Ղալաթիոյ Ս. Լու-
սաւորիչ Եկեղեցւոյն տօնախմբութիւ-
նըն է, նոյնպէս Գընալը կղզւոյն Ե-
կեղեցւոյ տօնախմբութիւնը լինելով,
յատկապէս հրաւիրուած է զհէր Մեղ-

քիսեղեկ Սրբաղան, որ հանդիսաւոր
Ս. Պատարագ մատուցանէ և քարոզ
խօսի:

Այս առթիւ հրաւիրուած է ուր-
սահայ երգիչ՝ Պ. Ներսէս Շահլամեանց,
որ Ս. Պատարագի մէջ դպրութիւն
պիտի ընէ:

Յառաջիկայ կիրակէ օրը (26 յու-
նիս) Օրթագիւղի եկեղեցւոյ Դպրաց
դասու հաստատութեան տարեգարծը
լինելով, Գեր. Տ. Վահրամ Սրբաղան
Արքեպիսկոպոս Մանկունի հանգերծ-
եալ է հանդիսաւոր Ս. Պատարագ մա-
տուցանել ՎԵՐԱԲՆՐՄԱՆ մեծահան-
դէս արարողութեամբ:

ՀԷՔ ՈՒՍԱՆՈՂԸ

(Իրական նորավէպ)

(Նախորդ իշխէն)

ԺԴ

Օրերն իրարու կը յաջորդէին և
Հայկի հիւանդութիւնն օր քան զօր
մեծ յառաջացում կ'ընէր, հազը կը
կրկնապատկէր, մաղձը կը շատնար,
քրտինքը կ'ածէր, տենդը կը սաստկա-
նար և ինք տակաւ գերեզմանին կը
մօտէր:

Այս պատճառաւ բժիշկը յանձնա-
րարած էր ուրիշ սենեակ փոխադրել
զՀայկ, բոլորովին միևնաձէլ վիճակի մէջ
զի իր Մշեցի սենեկակցին ախտաբա-
նական երեւոյթները փաստակար ազ-
դեցութիւն մը կ'ընէին իր վրայ:

Թղթապատ որմերով, ընդարձակ և
լուսաւոր սենեակ մըն էր այն, երկու
պատուհաններով զարդարուն բայց այդ-
սենեկին մէջ, ամեն ինչ մթաշուք, ա-
մեն ինչ մահաստուեր կ'երեւէր իրեն.
գոգցես ամեն առարկայ արցունքներ
ունէին, որովք Հայկի դառն վիճակը
կ'ողբային:

Առաւօտ էր, արեգակը նշուլազարդ-
պնած էր լեռներն ու սարերը թռչնիկը
կ'երգէր թաւուտից մէջ, հովիկը կը
սուլէր սաղարթուց տակ և ամեն ոք
ելած էր բնութեան բարիքը վայելե-
լու:

Բայց Աստուծոյ այս կենսատու
պարգեւներէն մէկը կար որ անմասն
կը մնար բոլորովին մեր հէք ուսանողն
էր այն, որ ինչպէս վերեւ յայտնե-
ցինք՝ իր այս նոր սենեկին մէկ խորշը
լքուած էր անտէրունջ, զուրկ մայրե-
նի գորովներէ, զուրկ հայրենի գըգ-
ուանքներէ և ճիշդ նման այն դեռա-
վիթիթ ծաղկան, որ պարտէզին մէկ
անջրդի անկիւնը թողուած է անխը-

նամ, կարօտ երկնից ցողին և արփե-
նի շողին :

Սակայն Հայկ, որչափ և զրկուած
աստուածեղէն լիառատ պարգեւներէն,
ինքզինք բոլորովին երջանիկ պիտի հա-
մարէր, եթէ տեսնէր խանդակաթ
մայրիկը՝ իր սնարին վերեւ նստած
կամ եթէ զգար սնոր մէկ ջերոտ համ-
բոյրն իր մահատիւ պատից վրայ և
կամ ինք զինք գտնէր նորա սիրա-
բուղի ծոցոյն մէջ, և իր կմախ թե-
ւերով սեղմէր զայն իր կրծոց վրայ :
Ահ, քանի՜ օն երանաւէտ պիտի ըլլար
այդ վայրկեանը, յորում պիտի բու-
ժէին իր բոլոր ցաւերն ու կսկիծնե-
րը : Բայց աւա՜ղ, մայրիկը հօն չէր,
եթէ հօն իսկ ըլլար ինչ պիտի ընէր
նա, ո՛չ ապաքէն անգստին ի խան-
ձարոց զլացած էր նմա իր սէրն ու
գորովն և սա թառամած էր տա-
րածամ . . .

Ահա այսպէս կը մտածէր Հայկ,
երբ այդ առաւօտ բանալով իր աչերը,
պատուհանէն դուրս հայեացք մը պը-
տտցուց և ապա պատին վրայ կախուած
նկարի մը սեւեռեց : Բաւական ար-
ուեստով գծուած պատկեր մըն էր այն,
որ ի տեսիլ կ'ընծայէր սորեալ աչերով,
մահադոյն չրթամբք և դալկատիւ ձեռ-
ներով պատանեակ մը, որ խշտեկի մը
վրայ տարածուած կը մնար անշարժ :
յայտնի էր թէ հիւանդ էր նա և թե-
րեւս մահուան ստուերաց տակ սքող-
ուած : Խշտեկին մօտ ալ կին մը կե-
ցած էր, հիւանդին մայրն, որ ի ձե-
ռին բռնած գաւաթ մը գեղը կ'ու-
զէր սահեցնել իր սիրեցեւորն չրթնե-
րէն ի վար :

Առաջին անգամ ըլլալով նշմարած
էր Հայկ այդ պատկերը, թէեւ երեք
օրերէ ի վեր հօն տեղաւորուած էր :
Ահ, ինչքան դառն հիացմամբ կը դի-
տէր զայն, մանաւանդ այն ջերմա-
դուր ի կինն, որ մօր մը բովանդակ
բնադըն ունէր և որ հսկելով չարա-
շուք անկողնոյ մը քովիկ, մահուան
ճանկերուն դէմ կը պաշտպանէր իր
հոգւոյն հատորիկը, իր զաւակը :

— Ահ, գթոյ հրեշտակն է, մըր-
մուաց Հայկ, որ իր զագին մօտ կե-
ցած՝ կը գուրգուրայ անոր վրայ . . .
էհ՛ր . . . էհ՛ր . . . ուր էր թէ ես ալ
ասանկ մայր մը ունենայի . . . մայր
մը, որուն շունչը երակացս մէջ մըլս-

ուելով կեանք պիտի տար ինձ . . .
ախ, անոր տաքուկ համբոյրներուն
տակ, անոր մայրենի լանջաց մէջ ո՛ր-
քան երջանիկ պիտի ըլլայի արդեօք :
Իմ սա դառնաղէտ վիճակս պատկերին
իրականութիւնն է, սա տարբերու-
թեամբ որ մայր մը կը պակսի սնա-
րիս վերեւէն :

Հոս լռեց և պահ մը աչերը փա-
կեղէ յետոյ, վերստին սկսաւ իր երա-
զախօհութեանց. — Մայր մը մեծ դեր
ունի իր զաւակին վրայ : Միթէ մայր մը
չէ՞ որ շահելով իր զաւակը, խրախոյս
և քաջայեր կը լինի նմա ամեն պա-
րագայի մէջ . . . էհ՛ր . . . էհ՛ր . . .
մայր մը չէ՞ որ՝ համեստութեան քո-
ղին ներքեւ սքողուած՝ ստոյիկեան ա-
րիւթեամբ կը դաստիարակէ իր տը-
ղաքները : էհ՛ր . . . էհ՛ր . . . ախ,
մայրն է դարձեալ իր որդին կախա-
դան հանողը կամ իր ձեռներով անոր
գերեզմանը բորոզը : էհ՛ր . . . ես ալ
լիտի մօր մը անմեղ զոհը չեմ միթէ :
մօր մը՝ որ գերեզմանս իր ձեռներով
պատրաստեց . . . :

Մինչեւ հոս արտասանած խօսքերն
արդէն շատ իսկ ճնշած էին իր կուրծ-
քը, այնպէս որ յաճախ հաղալով շուն-
չը բոլորովին նուաղած և հեւալ սկը-
սած էր : Իր ձայնը՝ որ երբեմն փոթոր-
կի մունչն ունէր, խղբուած էր և իր
նայուածքն՝ որ հրդեհի մը կայծերը
կը ցոլացընէր, շիջած էր : Միեւնոյն
ժամանակ սոսկալի տենդ մը զինքն ըմ-
բռնեց և բերնէն ճերմակ փրփուրներ
ժայթքել սկսան. — հիւանդութիւնն՝ ալ
աւելի սաստկացած էր, տասը վայր-
կեան այսպէս նուաղած մնալէ յետոյ
սկսաւ զառանցել կցկտուր բառերով :

— Այո՛, լիտի մօր մը զաւակն եմ
ես . . . և անոր անլուր մօլութեանց
անմեղ զոհը . . . դահիճ մ'եղաւ նա,
զաւակին դահիճը : անիծեալ ըլլաւ,
մայր, անիծեալ ըլլաւ . . . մեռցու-
ցիր զիս, թշուառ ըրիր զիս . . . ո՛ւր
էր թէ քար ծնէիր զիս ծնելու տեղ :
ինչո՛ւ աշխարհ բերիր զիս և ինչու
գերեզմանս բորեցիր . . . ահ, պիտի
կանգնիմ գերեզմանիս մէջէն . . . Աս-
տուծոյ առջեւ պիտի բողոքեմ ո՛ւր
որ երթաւ . . . ո՛ւր որ նայիս, տես-
նել պիտի կարծես ստուերը . . . պի-
տի սոսկաս, խիղճդ պիտի տանջէ
զքեզ . . . և միշտ խուլ ձայն մը պի-

տի լսես որ կ'անիծէ զքեզ . . .

Հայկի այս վերջին բառերն ահա-
ւոր շանթի մը նման դեռ կը թնդային
օդին մէջ, երբ սեւազգեստ կին մը՝
չարաթոյն օձի մը հանգոյն՝ ներս սո-
ղաց սենեակէն :

Հայկի մայրն էր սա՝ միշնահասակ
և յիսուն տարեկան կին մը՝ որուն իս-
կական գեղեցկութենէն, ուռած այ-
տեր, ցաւոտ աչեր, հաստ շրթներ և
մրադոյն յօնքեր եւեթ մնացած էին :
այլ սակայն անբարոյականութեան սեւ
դրօշմն անջինջ իմն կը կենար իր խոր-
շոված ճակտին վրայ :

Սոսկաց նա ի լուր այն անիծից,
որք զոգցես շանթերու փոխուած իր
գլխուն վրայ կը տեղային : ալլադու-
նեցաւ, մաղբը քստմնեցան, ջղային
սարսուռ մը զինքը ցնցեց : սիրտը ա-
րագ արագ կը բարախէր և կարծես
շանթահար դամուած էր սենեկին
սեամին վրայ : իր կեցուածքն ու նայ-
ուածքը հոգւոյն փոթորիկները կը
մասնէին :

(հարուստ կեր)

ԳԵՈՐԳ Կ. ՍԻՄԵՅՇԵԱՆ

Անկլիացի ճամբորդի մը պատմու-
թիւնն է հետեւեալը :

ԱՐՏԳՈՅ ԿԱՍՐԳԻ ԿԱԽՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ

Խուճա մը գերմանացի չինաս-
տանցիներով կը ճանապարհորդէի Ա-
նամի մէջ երբ գիշեր մի դադար ա-
ռինք գիւղ մը որ դիպուածաւ շատ
մը մօզեր անդ հանդիպու եկէր էին :
նոքս վեց հոգի էին, չորս էրիկ մարդ,
երկու կնիկ : և ամենքն ալ կարճա-
հասակ բաց ի մէկէն : որ մեծ յաղ-
թանդամ հսկայ մ'էր ալլափոխ ըմբը-
տի մը նմանութեամբ : Ես հուսկ յե-
տոյ նոցա հետ ծանօթացայ, վառն զի
ես ալ նոյն ատեն շատ օդուտ քաղած
էի ձեռնածուլութենէն և շուտով իրենց
բարեկամութիւնն ստացայ : Խիստ թա-
խանձախնդիր էին իմ աշխատութեանցս
և գործերէս արդիւնք մը տեսնելու,
սի քանի փորձեր ըրի, բայց ամէն պա-
րագայի մէջ ինձ կը բռնէին և կը խն-
դային ըրած ջանիցս վրայ : Բաց ի մէկ
անգամէն որ թէպէտ ամենէն անհան-
ճար բան մը, ապչեցայ զանոնք, այն

էր հին (փարաւոնի իժեր) անունով խաղն որ քանի մը տարի առաջ շատ հասարակ բան մ'էր :

Իմ ցոյցերս լմնցնելէ յետոյ դուները գոցուեցան, և միայն կանոնաւոր մուտք վճարողները ներս թող տրուեցաւ որ փոքրիկ դուռ մ'էր, և պահիկէ մը, խուցը լեցուեցաւ, կախարդներն իրենց գործողութեանց սկսեցին :

Ամէնը իմիտսին տախտակամածին վրայ նստեցան ժողովրդեան մէջ, որ ամենևին ճանաչում չունէին ինքզինքնին ծածկելու, կամ բան մը պահելու, իրենց խնդրանայր համեմատ անոնց վրանին զննեցի, փտահ և ապահով եղայ որ անոնք իրենց վրանին բան մը չունէին : Յետոյ կնոջմէ մին ելաւ կեցաւ շրջանին մէջտեղ, մնացեալները հանդիսատեսներուն ետեւը մնացին նոցա շուրջը մատանի մը կազմելու պարունակաւ : Արդ կանթնդին լոյսն քիչ մը վար առին, և վայրկեանէ մը կնոջ երեսն սկսաւ լուսաւորել հըրաշալի լոյսով մը որ շուտով մը իւր բոլոր մարմնոյն վրայ տարածուեցաւ : Յետոյ սկսաւ դառնալ, երբեմնտիկեցած միմունջ մը արտայայտելով, աստիճանաբար արագցնելով իւր դարձն մինչև որ կատարեալ արագութեամբ սկսաւ դառնալ : Վայրկեան մը այսպէս անցնելով, այն լոյսն որ իւր վրայ կը սփռուէր, այնպէս թուեցաւ ինձ թէ կեդրոնախոյս զօրութեան սկսաւ դառնալ, և դադրեցաւ գերան մը կազմելով ներս բոլորտիքը : Այս ամենն լմնալուն պէս պահ մը կեցաւ և նորէն դարձաւ և այս անգամ սկսաւ իւր բոլորտիքն կազմող լոյսն ցրուել իւր ձեռներով : Եւ թէպէտ որոշակի կը տեսնէի ներս ձեռներն լոյսին մէջ ամպի նման շափիլը, սկսաւ մարդու կերպարանք առնել, թեւերը ձեռները, սրունքներն բոլորն ալ խոնաւ և վերջապէս երես մը և գլխազարդ մը : Յետոյ նա լոյս խնդրեց, կանթնդներն վերստին վառուեցան : Հոն բոլորովին օտար մը կեցեր էր, ըստ երեւոյթի ամպային երկրաց բնիկ մը անդ գաղթած : Առաջ եկաւ ձեռներովն ինձ փաթտուեցաւ, նորա ձեռներն ցողաթարմ խոնաւութիւնն մ'ունէին իբրև թէ իւր մորթին ծակոտիկներէն անըդ գալի կերպով ջուր կը ժայթքէր դուրս

և ինքն յոյժ քաջառողջ ոգի մ'էր : Ինչ մը խօսելէն և գաւաթ մը կաթ խմելէն ետքը անծանօթն նորէն իւր տեղն գնաց կնոջ բովն և սկսաւ նորէն դառնալ :

Լոյսերը նորէն շիջաւ : Բայց ոչ այնչափ որ մենք չկրնամք տեսնել, մի քանի վայրկեանէն անծանօթին դէմքը սկսաւ գոյնը նորէն փոխել, քիչ մը ետքը գերանի կամ յոյսի կերպարանք առաւ, և յետոյ ինքզինքն կցեց այն կնոջ, և այսպէսով տեսարանին վերջ տուաւ : Այս ամենախիստ սակաւ ժամանակի մէջ կատարուեցաւ, գրեթէ յիսունի չափ մարդոց աչաց առջև, և ինձմէ ինը տասը ոտնաչափ հեռու : Մանկամարդ կինը այս գործողութենէն ետքը խիստ սպառեալ երեւցաւ : Արդ այս բանս հարկ էր բացատրուիլ հագեալանական ընկերութենէ իւր նոր զգացում մը և կամ գերնական զօրութիւն մը, բայց քու և իմ մէջտեղըս, գիտես որ ամեն բան կը բացատրուին պարզ տեսքով, ցոյցով մը, սա միայն խորամանկ վարպետաշէն խաղ մ'էր, այնպիսի ճարպիկութեամբ մը կատարուեցաւ որ կերպով մը չկրցայ զայն ի գլուխ պարզել :

Անդէն իսկոյն մատանիին մէջ իւր տեղն գրաւեց, և ինձ տուաւ մեծ, ճօխարար զարդարուած կացին մը, և ըսաւ : « Ժամացոյցով հինգ վայրկեանի մէջ ինձ պիտի գլխատես » :

« Առջի բերան ես չընդունեցայ, բայց նա պնդեց և ստիպեց զիս, և ինձ ըսաւ թէ այս գործողութիւնը շատ անգամ կրկնուած է, վերջապէս համաձայնեցայ, իւր վրայ քանի մ'անգամ դարցաւ, ազօտ լոյսի մէջ սկսաւ տարօրինակ կերպով ոլորուիլ մինչեւ որ նշմարելի կերպով փոքրեցաւ, և վերջապէս թափանցիկ մարմին մը մեր աջաց առջև եկաւ կեցաւ այնպէս որ կարծեցի թէ իւր մարմնոյն թափանձկութենէն միւս կողմի եզոզ անձը կըրցայ ճանչնալ : Հինգ վայրկեան անցաւ չանցաւ կացինն ձեռքս առի և թեթեւակի հարուածով մը զարկի, միայն մարդ մը տապալելու զօրութեամբ, երբ ի մեծ զարմանացս, արիւնը իմ երեսս ժայթքեցաւ և գլուխը վար ինկաւ տախտակամածը թնթաղելով : Հազիւ թէ գլուխն ինկաւ մարմինը ձեռքաւ առաւ դետնէն, օդին մէջ

բռնեց և յետոյ ուսերուն վրայ դրաւ, լոյսը բոլորը վեր առնուելով անդ տեսնուեցաւ հսկայն խորշամեալ և կրակոտ :

Բոլորն ոչնչացած էր, դու պարտիս յիշել թէ այս ամեն բաներուն մէջ, թէպէտ և լոյսը քիչ վար առնուած էր, կրնար մեզ արգիլել ամեն բան տեսնալէ, և կը թուի ինձ թէ կը շիջեցնէին միայն թէ մենք կարողանանք նշմարել լուսոյ դեմքերն, կերպարանքներն, որ այնպէս հետաքրքրաշարժ կերպով խոյս կուտային միջնակունքէն ինչպէս մեր հագեցութենէն կը կոչեն :

« Հետեւեալ փորձն ալ կարի խորհրդաւոր էր բոլոր մասնախումբն մատանիին մէջ կեցան, և սկսան երգել պարել, մի քանի վայրկեանէն դադրեցան, և տեսանք թէ մէջէնէն մին կը պակսէր, թէպէտ ոչ ոք տեսած էր նորա երթն : Վայրկեան մը վերջը պարը կրկնուեցաւ և ուրիշ մը աներեւութացաւ և այսպէս հետզհետէ մինչև վերջը, մինչեւ որ քարորդէ մը միայն հսկայն տեսնուեցաւ : Մեզի աւելի լոյս տրուելով դրան ետին շնկոց մը լսուեցաւ, անդ երթալով տեսանք հինգ խորհրդաւորներն որ մուտք կը խնդրէին : Այսպէսով լմնեցաւ գիշերուան հանդէսն : Ես նոյն գիշերը մինչեւ լոյս արթուն կեցայ կամ աւելի մինչեւ առաւօտ, ջանալով տրամաբանել բոլոր առջի գիշերուան եղելութիւններն : Բնիկները մոգ անունը առին առանց բանակուիլ ընելու, և ես ալ սկսեցի խորհիլ թէ ճիշդ նոյն իսկ բառն էր նոցա կոչելու :

« Հետեւեալ օրն ուրիշ գործողութիւն մը արուեցաւ կէս օրին որ յոյժ զարմանալի բան մ'էր : սակայն ինչպէս որ ես կը կոչէի, հրամայեց իւր խումբին նստելու մարդագետնի վրայ, մէջտեղերին քսան ոտք տարածութեան շրջան մը թողլով, և ասոր մէջն ձեռնածուներն իրենց տեղն գրաւեցին, հսկայն սկսաւ փորձն առնելով անուակ մը ժապաւէն, և աջողակութիւն մը գրեթէ յիսուն ոտնաչափ հեռու նետեց, ուր տեսանք որոշ կերպով բազէ մը որ նետի արագութեան թռեցաւ և օդին մէջ բարձրացաւ, մինչեւ որ գրեթէ անյայտ եղաւ : Յետոյ ինձ թուեցաւ թէ թռու-

չունն ամպի մէջ կը մտնէր որ ես եղ-
րակացուցի թէ ժապաւէնի վրայ բան
այրելով պատճառած էր սա, բայց
ամպէն վար սահիլն տեսնուեցաւ ա-
ռաջ շուն մը, յետոյ օձ մը, ահագին
իժ մը, գետինը դպած ատեննին կը
տատամսէին և անդ գտնուող մարդիկ-
ներն կը բռնէին զանոնք:

Յետոյ աւելի մեծ իր մը տեսնուե-
ցաւ ժապաւէնին երկայնութեանը վար
սահիլ և կնիկներէն մին առաջ ցաթ-
քելով բռնեց զանի և ժողովրդեան
ցցուց. խնդում երես բնիկ մանկիկ մ'էր
սա, Հսկայն այս բոլոր միջոցիս ժա-
պաւէնին ծայրը չէր թողած, զայն
թողլով, այնպէս թուեցաւ ինձ թէ
օդին մէջն աներեւութացաւ, ուէ
կերպով այլ ևս չի տեսնաւ: Մի քա-
նի վայրկեան յետոյ ամենն ալ ձեռք
ձեռքի տուին և սկսան արագ արագ
շարժիլ: Երբ անոնք ալ կողմն դար-
ցան որոշակի կերպով տեսայ և տաս-
նեւերկու հոգի համբեցի շրջանին մէջ
երբ շարժումնին փոխեցին միայն ութ
հատ տեսանք, և մին ի նոցանէ տես-
նուեցաւ մէջտեղերնին կեցած:

Ահա ասոնք են այն հրաշալի փոր-
ձերն որ նոքա կատարեցին:

Յ. Ս. ԹԷՐԶԵԱՆ

ՀԱՐՍԱՆԻՔ

Չորեքշաբթի օր «Հարսանեկան»
խորագրով յօդուածի մը մէջ ինչ ինչ
խորհրդածութիւններ ընելէս զատ,
անցեալները երկուշաբթի օր մը հար-
սանեկան կառքերու պատահելիս և
այն առթիւ տեղի ունեցած խօսակ-
ցութիւն մը հրատարակեցինք:

Նոյն խօսակցութենէն և փոփոխէն
անցնող կանանց բազմութենէն մենք
ալ հետաքրքրուելով, ուղղակի եկեղե-
ցի երթալ որոշեցինք. բայց հազիւ ե-
նեղեցւոյ փողոցը դարձած էինք, ին-
քզինքնիս Բաշայի եկեղեկարձեցինք. «Ե-
ֆէճէներ, պէօթէճէներ, Բէֆէճէներ, Էյ-
լնէճէներ փաշոցին երկու կողմը շար-
ուած իրենց եղանակները կերգէին,
իսկ անոնցմէ վեր երկու սեռէ մուրա-
ցիկներ կարգաւ շարուած:—տարօսը
ճահիլներուդ կլօխն ըլլայ, տարօսը
ձեր տունն ըլլայ, տարօսը ձեր կլօխը
ըլլայ,—ըսելով բարձրաձայն ողորմու-

թիւն կը խնդրէին անցորդ բազմու-
թենէն:

Ուշագրութեան արժանի էր նը-
կատել, որ այս մուրացիկները կը յա-
ջողէին առատ ողորմութիւն կորզել ա-
ւելի աղջիկներէն, քան թէ կիներէն:

Ինչ որ է, մտանք եկեղեցւոյ բա-
կը ուր կանանց անյուսալի բազմութիւն
մը լցուած եկեղեցի մտնելու ճիւղեր
կընէին. կերեւէր թէ եկեղեցին ամ-
բողջ լցուած և շատերը դուրսը մնա-
ցած էին. եկեղեցի մտնելու համար
կանանց այսչափ բազմութիւնը ճեղքել
անցնիլը անքաղաքավարութիւն հա-
մարելով, ծառի մը շուքին տակ ա-
պաստանեցանք, ուր մեր շուրջը զրտ-
նուող կանանց խումբերէն լսեցինք
հետեւեալ խօսակցութիւնները:

—Ինտո՞ր ըլլար տէ ներս մտնա-
լինք. պարէ էկանք նէ հարսը օլսուն
տեսնայինք:

—Սուս էղի, ասանկ ալ պան հիչ
չէյի տեսեր. մեղա՛յ, զահէր ժամը
իրենցն է. իլլէ զօր մը քի տուք ներս
չի պիտի մտնաք տէյի:

—Ձեա նայիր, խօսքերնին ալ
էղաւ. օխ, աղէկ ալ ըրին. իշտէ ա-
նոնց ասանկ էտէպսիզ կնիկներ պէտք
է. պօռացին, կանչեցին, խօսքերնին
ըրին ներս մտան:

—Էյ ինչ ըսեմ. անոնք մտան լեց-
ուեցան ամա, մենք ալ պացը մնա-
ցինք. պարէ սանկ պիշիմլի տեղ մը
կայնէինք տէ, հարս ու փեսայ դուրս
էլած ատեննին օլսուն տեսնայինք:

Ուրիշ կին մը դալով.

—Բարեւ. ձեզ. աս տո՞ւք ալ տուր-
սը մնացեր էք:

—Քա տո՞ւն ալ էկար. եա էրէկ
ասօրուան համար չամաշըր ունիմ կը-
սէիր կոր նէ:

—Սուս էղի. պարէ առտուն կա-
նուխ չելլամ տէ խաղա՞նք չի վառեմ:

—Վո՛ւյ, բէք խամսըդ էս աղջիկ,
էյ զահէր օճախը մարեցիր էլար էկար:

—Թէքնէս թէքնելիկս խուրմիշ
ըրեր, լաթի պիլէ պաշայեր էի. մէյ
մըն ալ տալս աղջիկը եկաւ էկաւ քի,
հայտէ, իլլէ պիտի էրթանք. ան խը-
տար չէ ըսի. լաթըս պաշայեր եմ,
հասըլը ինչ ըրի չեղաւ. նիհայէթ լա-
թըս ֆէրահաթ ընել տուաւ ա, քա
պէլան հոն չէ, հիմայ ներս մտնալը
միւսքիւնսիւզ է:

—Էյ տալդ ուր է, հետդ չէ նէ:

—Չիտեմ, ան ըրաւ չըրաւ տեղէ
մը ներս մտաւ ամա. սա նայէ. սէ-
պէպ էղաւ տէ նաֆիլէ լաթս մնաց:

—Տուն ան կերուիս կսր, եա ե՛ս
ինչ ընեմ քի, իրեք օխա կիւզէլիմ
ֆիշնէյիս արունը մտայ:

—Վո՛ւյ. ծունը կլխուս, ինչ ըրիր
քի:

—Ինչ պիտի ըլլայ, մերինը էրէկ
իրիկուն իրեք օխայ ֆիշնէ իլէ վեց օ-
խայ չէքեր պէրաւ քի անուշ էփէն.
եա ալ էրէկ իրիկունէ կուտերը հա-
նեցի հաղըր ըրի քի ասոր խօլայ
ըլլայ տէյի. մէյ մ'ալ առտուն տահա
չի պաշայած նայիս քի քեօր օլաճախ
աղջիկներս վիլլուկը տրին քի, խալիսը
պիւթիւն հարանիք սէյիր ընելու կեր-
թան կոր մենք ալ էրթանք տէյի:

—Էյ հապա ճահիլ էս, կը լսէն կը
տեսնան նէ, իրենք ալ արդու կընեն:

—Աղէկ կըսես քուրուկ ամա, աս
իրեք օխայ ֆիշնէ է, անուշ պիտի ըլ-
լայ, շուրուպ պիտի ըլլայ, կենէ տիւն-
եային կործն է, խօլայութիւնով կըլ-
լայ:

—Էյ. ի՞նչ ըրիր, չեփեցիր:

—Չեփեցիր կըլլա՞յ, կուտերը հա-
ներ էի, մնայ նէ կաշխի նէ:

—Հապա ի՞նչ ըրիր քի:

—Ինչ պիտի ընեմ. հա ըսի չեղաւ,
նայեցայ քի լախըրալ բէյտահ պիտի
ըլլայ, պարի ձեռք ձեռքի տանք տէ
չափուխ մը եփենք օրթայէն վերնայ,
սօղրա ալ երթանք ըսի:

—Ատիկայ աղէկ խելք էս ըրեր:

—Սաղըլըս սէլամէթով խելք ըրած
չըլլայի, իրիկունը մերինը, ուր է սա
էփած անուշդ պեր տէ համը նայինք
ըսէ նէ, ինչ ճուղապ տալու է ան կը
մտմտամ կոր:

—Քա հապա էփեցի ըսիր նէ,
եօխսա խըվամը անցաւ ինչ էղաւ:

—Բէշքէ ասանկ պան մը ըլլար,
կենէ մէկ շարէն կը կտնաս, նորէն
խըվամի կը պերես պան մը կընես,
ինչ է նէ վրան կը կոցուի կերթայ:

—Մեղայ քուրուք տուն ալ, պան
մը պիտի ըսես, սահաթ մըն է մեզի
տէրտլի վէրէմլի կընես կոր. եղածը
ըսէ տէ, պարէ մեզի մէրադէն աղա-
տէ:

—Քա չիտակը պէրանս վրայ չեր-
թար կոր քի ըսեմ, կիւզէլիմ անուշս

խաղաղի մը էկաւ, խաղաղի մը էկաւ քի, քանի միտքս կիյնայ կոր նէ սիրտըս չայիր չայիր կէրի կը մըկի կոր:

— Պիւթիւնն ալ զիյա՛ն էղաւ ինչ էղաւ:

— Եւ՛, մենծ օլաճախս ինծի աւանկ աճէլէյի մը պէրաւ քի, տաճա խըվամն ալ աղէկ մը չէր էկած, օճախին վրայէն վար առնեմ ըսելնիքէն նասըլ և զաւթէն ձեռքէս փըռլանմիշ ըլլալուն պէս, ան տեսնաս, մութվախին օրթան սէլ էլաւ, հէլէ քի Ոստուած պահեց տէ, տամլա մը օլսուն նէ վրաս թափեցաւ նէ ալ օճախին մէջը ըսաթ էկաւ:

— Քա վո՛ւյ, մեծ խաղա մը անցուցեր էս կէնճ. աճապա ինտոր վախշար:

— Ի՛նչ կըսես, եա էլլար օճախին մէջը թափեր եա վրաս թափերնէ կայ եա, կըսուս ծուն մը պիտի պացուեր քի, հիշ իքի պիր չիկայ, եանի սիրտիս կիջնար ան տեղը կը մնայի:

— Քուրուկ, քեզի պան մը ըսեմ, ատ կէնէ աչք է: ով գիտէ որին աչքը պաներ է:

— Աման տուն ալ, զահէր չիքեար պան մըներ, նէ աչք նէ մաչք, իմիններուս վըռթկածութիւնը. հարսնիք կայ եղեր, որի՞ հոդ. ի՛նչ կայ քի աճէլէյի պողմիշ ըրին տէ, ինծի ալ շաշըրթմիշ ըրին. իշտէ էկան տէ ի՛նչ սէյիր պիտի կընան ըներ:

— Էյ հիմայ անոնք ուր էն, պարէ կըցին ներս մտնել:

— Նէ մինասիպէթ, քովի բէնճիրէներուն տէմիրներուն վրայ կախուեր կէօեա անկէ ներսը սէյիր պիտի ըներ. ինչուս պէտք, ինչ կուզեն թող ան ըներ:

— Քա վայ խելքիդ կնիկ, հէլպէթ խըեախ տող էլար:

— Ատ ալ լախըրտը՞ է, ծառքս օտքս պուզ կտրեցաւ. հէմէն անկըրծակներու կալը պան մը ըսել չէր, հէլէ Ոստուած ողորմեցաւ:

— Վույ, աղէկ սիրտ օր կէնէ աղջիկներդ առեր պերեր էս:

— Էյ ինչ ընեմ հոգի, ճահիլ էն իշտէ, խօսքերնին չընես չըլլար:

— Քա աղջիկ, օճախներուն տակը ատ խըտար տող էլար նէ չըլլաս պանի մը կաս, պարէ աս իրիկուն տըրսէվէյի իլաճ մը պան մը ըրէ:

— Նայինք աս իրիկուն մերինը էնչ պիտի ըսէ, առաջ անոր ծանը կըտրենք տէ. գէրէ ասիկայ վեց օխայ չէքէր է. զաթը չէքէր պու սէնէ բահալը տըր ըսելով, ան խըտար առնել չեր ուզեր կոր, ինչ է նէ զօր զօրաքի առնել տուինք ամա, նայիմ ինտոր մէրամ պիտի հասկըցնեմ. աս իրիկուն մեծ օրօրտուճ կալ:

— Հոգդ պիլէ մըներ, անոնք էրիկ մարդ էն, մէյմը բարլամիշ կըլլան, սողրա կանցնի կերթայ, ինչ կըլլայ, խաղա է էղեր է. թող մէյ մըն ալ առնէ:

Այս միջոցին բակին միւս ծայրէն խառնաչփոթութիւն մ'է փրթաւ. ելած ձայներէն կուլ ըլլալը կը հասկըցուէր, բայց մենք ստիպողական գործ ունենալուս չկրցինք աւելի երկար կենալ և մեկնեցանք, որով և կուռոյն ինչ ըլլալն ալ չկրցինք հասկընալ:

ՖԻԼՈՐԵՍՏՍ ՊԻՐ ՎՈՒԳՈՒԱԹ

Ֆիլօրեատա կէչէնկէրտէ պիր մէնգարէ վուգու պուլմուշ տուր: Պէյօղլուտան Մագրիքէյինէ եազըղա կիթմիշ պիր ֆամիլեայա տիկէր պիր ֆամիլեա միսաֆիրիկէ կիթմիշ օլտուզունտան, էվ սահիպի միսաֆիրինէ պիր իքրամ իթմէք նիյէթի իլէ, պիր բաղար կիւնիւ գատըն էրքէթ թօփլանըպ ֆիլօրեատա կիտէրլէր. օթուրմա եա պիր մինասիպ եէր արամատա, նիհայէթ էքսէրիյաթը արա իլէ հավուզուն քէնարընա օթուրուլար:

— Հանըմ, աս էյլէնճէն բուկին միտքէդ կանցնէ՞ր,

— Հա աղջիկ, ֆիլօրեան պիտի տեսնամ տէյի մտքէս անգամ չէր անցնէր, էյ չիտակը բէք աղւար նէ գարէթի տեղ է եղեր, օ՛՛՛ խ:

— Քուզում հաճի հանըմ սանկ ըրահաթ նստէ օր սա հեռուի օրմանին ալլըմանութիւնը աղէկ մը տեսնաս:

— Պարոնտատըս տալի մը եազըլիս էր եկէր տէ ամիս մը մեղ չթողուց՝ աղջիկս ալ առջինեկովը ծոսվոր էր, օր մը տօլմաներով ելանք ժողուլեցանք հոս եկանք, չէն չէնիքի տալմիշ ենք եղեր մէյմալ անձրեւ մը անձրեւ մը անձրեւ մը օր, հեռուներ ըլ-

լայ սելեր գալեց:

— Քա վույ ծունը գլխուս, էյ սողրա ի՛նչ ըրիք:

— Քա հիմայ ինչ ընենք, աղջիկս ալէրիու հագուով, պերերու ալ օրերը, վերէն վար շամուռները բաթտուեր հէլէ քի հաճի աղան խելք ըրաւ տէ խախվէճիյին կուլիպան իօթեց մեղ, Կէնէ անանկ իքէն ան փըռթըխին ըրածը չի մնաց, կըսես ամա բէք չէն աղջիկ էր:

— Մեղք օր կէնճին տէմը ատ պէլալը մարդը էլաւ տէ ամէն օր արունէն արձունք կը թափէ:

— Թալէհի ըլլար նէ չէր կարգուեր, աղջիկը կիտես քի կըլսուն կալիքը կիտէր: մանչուն թարաֆէն խօսկապը պէրած օրերնին, շախատան քա աղջիկ ըրիր չըրիր պէճերեցիր սօնունու ըսի նէ. . . Ժօ սէթին քովէն ասթին էկոյ կէնէ իս տողերու մի հանտըպցուներ:

— Վարը էրիկի ծառ մը կայ վրան տօլու էրիկ լեցունէ:

— Ծօ հիմայ տէրը կանյ նէ ծեծ կուտես:

— Ամեն մարդ կը բրցունէ կոր հը՛, չիյտեմ ես ալ պիտի փրցունեմ:

— Հէմէն արուններ փոխես պիլէքիմ. կեցիր, իրիվան էս ալ հօրքը խապար չիտամնէ մարդ չեմ:

— Հաճի հանըմ ձգէ ինչ կուզէ նէ ընէ, չօճուխ է. հիմակ անոր արունը կեփի:

— Բէք հաշարի է օրտտի, ինչ կըսէյի կոր. . . մարդուն խելքը պան կը թողուն օր, հեռուներ ըլլայ. . . հա սասանկ օր ըսի նէ, կէնճը տառցաւ ինծի ըսաւ օր, հաճի հանըմ չիտակը հիշ ներսէս չի գար կոր ամա Ոստուած սօնուս խայրը ընէ. գա խե՛նդ ըսի. ասանկ պօշ մամտուքներով սիրտըդ մի խաղցներ. ինչալլահ իրարու խեր տեսնաք տէ թողներու տէր ըլլաք. Ոստուած լսէ պէրնէդ ըսաւ. աս ըսելը ինչ է. կիտես քի առաջուր նէ իրեն մալիւմ է եղեր:

Պու արա գահվէճի կէլիպ սօրտու քի գահվէլէր չէքէրլի մի՞ օլաճագ:

— Պիղէ ալթը թանէ չէքէրլի գահվէ բիշիր ամա, էյի գայնաթմայը:

Պիրազ միւտտէթտէն սօնրա գահվէլէր կէլտի:

— Հանըմ հրամմէ:

—Առաջ հաճի հանրմին տուր :

—Առ հոգի խմէ , ինծի ալ կուտայ :

—Տուտու ես ալ խաճվէ կուզեմ :

—Չօճուխները խաճվէ չեն խըմեր :

—Գուզում տուտու , եուտում մը խմեմ :

—Ա՛. ո՛. տեղ մը տուլիկ չես իտար :

—Գա տուտու ես ալ խաճվէ կուզեմ :

—Խօճաման պոյօվըդ չե՞ս խախիր :

—Ա՛ն կը խմէ կոր :

—Ան պղտիկ է , տուն անոր քովը խօսխօճա աղայէս կը վայլէ զահէր :

—Շը՛. չիտեմ . աղապա ես ալ խախիլէ կուզեմ :

—Կայնէ օղում հիմայ շէքէրճի մը գայ նէ քեզի շէքէր կառնեմ :

Պու առա շէքէրճի թապլասը պաշընտա կէլիր :

—Պաքսանա շէքէրճի , նասը վերի-եօրսուն պադալըմ :

—Էֆէնտիմ ԱԶ դուրուշա տըր նէ՛ գաաար օլաճագ :

—Նէ սէօլէեօրսըն Սթանպօլտա էն էլիսի 6 դուրուշա վերիեօրլար :

—Էօլլէ ամա , պիզտէ սլունտա սիզին կիպի աղայար սայէսինտէ պիր գաչ բարս գաղանաճաղը :

—Աղապա ես կարմիր պերզամօթ կուզեմ :

—Կայնէ ծօ բաթլամիշ կըլլաս կոր , հիմայ թէրէյիդ իշնամ նէ կը տեսնաս :

—Ձարարը եօգ աղա , չօճուղուն ճանը խթէտի :

—Նէ իսէ շունտան պիզէ ևարլմօ օգկա թարթ :

—Աղա իլիշմէ , նա պէնտէ ուֆագ վար :

—Օլմա՛ղ . եագըշքրսա բէք էյի , սէն պանա պիր մէճիտիլէնին գուսու-րունու վեր :

—Խաչ հագկը իշին պըրագմամ , սէն մէճիտիլէի կէրի վեր :

—Եօգ ճանըմ սանա նէ տէեօրսամ օնու եար :

Էյ օլմազ պըրագմամ տէյէրէք , աղաբը մահգա բարա վէրտիրմէմէք իշին կէրիլէ սիւրտիլիւնտէն , արգասընտա հափուղ օլտուղունու կէօրմէյիպ , անաղը պօշա կիթտիկի կիպի , աղա հիեթթը ասլիեթսի իլէ հափուղուն իշին տիւշիւ վերիր :

—Վույ հասէք , հիմա խելքս կը

թուցունեմ , աղան ծառքէ կելլայ կոր :

—Մը՛ վախնաք պան չիգայ , պիր շէյ եօգ . շու էլիմտէն թուլթաա եօգարը չըգաբըմ :

—Նա էօթէտէ վերտիվէն վար օթարաֆա կէլ քի գօլայ չըգասըն :

Պիղիմ աղա Հասքէօյ Բէճէճիլէրի կիպի եարը պէլինէթէք սու իշինտէ հափուղուն վերտիվէնինէ տօղրու եօրիւմէկէ պաշլատը . պու արա հաղըրուն թապիլթը իլէ կիւլմէսինի թուլթամաղըտը , աղանըն էհլի պու կիւլիւշէրէ հիտտէթինի թէսքին իտէմէյէրէք , անալիեթ տօղրու տէօնիւպ ,

—Գա նէ՛ վար քի պու գատար կիւլէեօրսունուղ , մեղա՛յ , զահէր մայմուն օյնաեօր ,

—Ծանըդ քաշէ՛ քա :

—Ինչո՛ւ պիտի չըսեմ , զիեանա կիւլիւճիւ թախըմ մը սըյըլիններ թողըլիսերճին օրթան տընեն տէ խընտան չամըչցած չի խըպնածներ :

Էյ ճանըմ կարճ կապէ ըսինք , զաթը ամենուն առջին ըռէղիլ էղանք . շէքէրճի բարանը ալտըն մը :

—Այմատըմ ամա գարարը եօգ . բէշաիմալը վերէյիմտէ իւթիւնի չիմտիլիք պիրաղ գուրուլթ :

—Իլքին սէն շու բարանը ալ :

—Պէ ճանըմ իլիշմէ տէեօրում :

—Աման հաճի աղա իլթէ վերտիմ կիթտի . կէնէ չօգ իպրամ իթմէ պիր տահա տիւշմէյէլիմ :

—Պիր թարաֆըն ինճինտի՛ մի . պիր շէյ օլտուն :

—Եօգ պիր շէլ եօգ . եալընըզ պիր հափուղ պանեօսուլլա գուրթուլտուք . հայտէցէք նայինք շէքէր կէրէք , տէյէրէք քէնտի տախի սուլարը ագարագ պաշլատը շէքէր եէմէկէ , նիհա-յէթ շէքէրի աղ վագըթ զարֆընտա պիթիտիքտէն սանրա էվլէրինէ տէօն . տիւլէր :

ՃԱՆՃԵՐՈՒ ԴԵՄ ԴԱՏԱՎՃԻՌ

Դերմանացի գիւղացի մը ծախելու համար ամանով մեղր կը տանէր իքաղաքըն . ճամբուն վրայ յաճախորդ մը ուղեւով քիշ մը մեղր գնել , սակարկութիւն կընէ և գիւղացին իւր մեղրէն մաս մը վաճառելէ յետոյ ճամբան շարունակելով կը հասնի իքաղաք :

Ի զո՛ւր մինչեւ իրիկուն կը պօռայ . « աղուոր մեղր ունիմ , շատ աժան , շատ աժան » : Իւրաքանչիւր անցորդ կը նայի և ճամբան կը շարունակէ : Առնող բնաւ չկայ , զի ամանին բերանը բացուած ժամանակ ճանճերն փուլթացեր էն ներս մանել և մեղուներու արտադրութիւնն աւերել :

Դիւղացին սաստիկ զայրացած՝ ուղղակի դատաւորին կը դիմէ պահանջելու համար իւր կրած փնտը , Դատաւորն աղնիւ անձ մը ունին կը դնէ գիւղացւոյն , որ մի առ մի կը պատմէ եղելութիւնն և հրաման կուտայ նմա սպաննելու բոլոր իւր ձեռք ինկած հանճերը :

Ձայս վճիռ գրաւորապէս կը պահանջէ գիւղացին և դատաւորը կը հնազանդի նորա կամաց և թուղթը ստորագրելէ յետոյ կուտայ իրեն :

Հաղիւ թուղթն առած էր գիւղացին և ահա տեսաւ որ դատաւորին ճակտին վրայ ճանճ մը կը հանդէշէ . ծանրաքայլ կը մերձենայ և իւր բուրդը զօրութեամբ ապտակ մը կը զարնէ նմա ճանճը սպաննելու համար :

Դատաւորն այս յանդգնութեան վերայ սաստիկ զայրանալով կը հրամայէ խստիւ պատժել զգիւղացին , այլ նա անփնաս կազատի իւր ստացած դատաւ վճուոյնը զօրութեամբ :

ԾԱՂԿԱՔԱՂ

Կծծի հարուստ մը իւր եղբորորդւոյն արծաթեայ ժամացոյց մը նուիրած ժամանակ , հետեւեալ առարկու-թիւնները կ'ընէ առանց ամաչելու .

—Ա՛հ , սիրելիս , եթէ ուզէի , ոսկիէ կը նուիրէի քեզ , բայց մտածեցի որ՝ եթէ մէկը գողնայ , ո՛րքան պիտի ցաւիս ըրած մեծ կորստեանդ վրայ :

Երկու արբեալներու մէջ խօսակցութիւն մը :

—Ինչո՛ւ միշտ այսպէս կը գինովնաք :

—Վիշտեքս , ցաւերս խեղդելու համար :

—Կը յաջողիք դոնէ :

—Ոչ , անզգամները քաջ լիղալ գիտեն :

Ճաշարանին մէջ .

— Կառսօն , ի՞նչ է այս . բերած ձուկդ հոտեր է . կարելի չէ ուտել :

— Իրաւունք ունիք : պարո՞ն , փոթորկին պատճառաւ այդպէս եղած է :

— Ո՞ր փոթորկին վրայ կը խօսիք . հինգ օրէ ի վեր հանդարտ և գեղեցիկ է օդը :

— Պարո՞ն , անցեալ շաբթու մէջ փոթորիկ մը չեղա՞ւ , չէ՞ք յիշեր :

Օր մը Ծօնթընէլի կը հարցնէին թէ՛ ինչ միջոցաւ յաջողած էր այնքան բարեկամ շահիլ և թշնամի մ'իսկ չունենալ :

— Հետեւեալ երկու խօսքով , պատասխանեց , ամէն ինչ կարելի է . ամէն մարդ իրաւունք ունի :

Կին մը ստակ կը հաւաքէր . Գաւ կը կը ներկայացնէ հարուստի մը որ խստութեամբ կը պատասխանէ :

— Բան մը չունիմ :

— Ուրեմն , պարո՞ն , առէք քսակը , քանի որ ես չքաւորաց համար հաւաքած եմ :

Ագահ մը ծանր հիւանդ է ,

— Տօթէօն , կ'ըսէ իւր բժշկին որ անկողնոյն քովն է , ինչպէս կրցայ երեք շաբաթ առանց բան մը ուտելու ապրիլ :

— Ձերմը կը անուցանէ , կը պատասխանէ բժիշկին :

— Արդեօք ձեր այդ ըսածն սպասաւրացս ալ կրնա՞ք տալ :

Երկու բարեկամաց միջեւ խօսակցութիւն մը :

— Լսեցի որ ամուսնալուծութեան պիտի դիմէք :

— Ա՛հ , այո՛ :

— Ինչո՞ւ . օրինակելի կին մ'ունիք դո՞ւք :

— Բարեկամս , նկարչաց համար է միայն :

Հարսանեկան ճաշին վրայ :

— Դեռահասակ հարսը կը մտածէ : Այս ատեն ամուսինն :

— Գրաւ կը դնեմ որ այժմէն աւուսնալուծութեան վրայ կը խորհիք , Հարսն միամտօրէն :

— Օ՛հ , ո՛չ դեռ :

Ծովու բաղանեաց մէջ :

— Ի՞նչ , սիրելիս . . . սեղանէն ելածիդ սլէս պիտի յողաս : Ի՞նչ անխոհեմութիւն : Կրնայ ըլլալ որ խեղդուիս . . . :

— Ո՛հ . . . վախնալու բան մը չը կայ . . . ձուկ միայն կերած եմ :

Երկաթուղւոյ կայարանին մէջ :

Ուղեւոր մը տոմսակաւաճառին :


— Առաջին քաշը Փարիզէն Մարսիլ ետ ո՞րչափ է .

Տոմսակաւաճառը կը յայտնէ գինը և կուտայ նմա տոմսակը , մինչ սոյն վերջինը գրպանները կը խառնէ : Ճանապարհորդը տոմսակն առնելով առանց գինը վճարելու :

— Շնորհակալ եմ ձեր տուած տեղեկութիւններէն :

(Քարգո)

Մ. Գ. ՄՕԶԵԱՆ



ԵՃՁԱՅԱՆԷԻ ԹԻԻՐՔԻՅԷ

ՊԱՊԸ ԱՆԻ ՃԱՏՏԵՍԻ ՍԻՐՔԷՃԻ ԻՍԿԷԼԷՍԻ

Միւսնէտէտէն քիւշատ օլունան ԷճՁայանէի Թիւրքիյէտէ Էլքոփանըն Էն միւքէմիլ Ֆապրիգաւ լարընտան տողուտան տպրոյա ճէլպ խոխլէքտէ օլան հէր նէվ մուալիճէլէր ի է հէր կէօնա խոթիհ-գարաթի թըպլիյէ , սուրէի Էնվէիյէթ վէ ին-թիգամ թամմէ վէ քէմալ տըղաթլէ իլլալ իթտիր-տիկինէ պինան կէրէք մէքթէպ թըպլիյէի շահանէ վէ կէ-էք Էվրօքս մ քեաթիպլիտէ վիճուտը թէր-քիպ իտէն հէր պիր աղանըն Էմրազ միւլաթէլիֆէ-իին խուսուսի օլարագ թանսիլ իլէ մէմլէքէթիմ-դ-տէ քէսպի շէօրէթ իթմիլ օլան մուալ եիյն մէշ-հոք վէ աթպպալի հաղիքայ էյամ , մախսուսէ-լէրինտէ տպլիմ-լ Էվքաթ ԷճՁայանէի յէ միւրաճա-աթ իտէնլէրի մուայեհէն վէ թէտալի իթմէքտէ տիրլէր :

ԷճՁալս անէյի մէղքիւրըն սէրիր եաթ խարիճիյէ իչին ալթը եաթաքլը պիր խանէի մախսուսէ տա-խի Պէյ օղունտա թէփէ պաշընտա մէվճուտ տըր :

ՖՈՒԱՆԳՖՕՐԹՈՒԱԶ

ՏԷՆԻԶ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

Սէմաեէ Փրանզ 0.250,000

Ինթիեաթ ազէսի Փրանզ 100 000,000

Մէղքիւր գումբանիա տէնիզ գաղալարընա գարչը վարօրյարտա վէ կէ-միլէրտէ եիւքլէնիլէն մալլէրի , վէ քէզալիք բօսթա խտարէլէրինէ թէսլիմ օլունան միւսնէվհէրաթ վէ եախօտ պանգնօթ Էվրագը զանէթ ԷճՁայանէի վէ սուհուլէթլէ սիկուրթա իտէր :

Պու ճիհէթլէ մէպալիլի քիւլիեհէի սիկուրթա իտէպլիմէք իչին իշպու գումբանիա Էվրօքստա 13 թանէ պիւեիւք սիկուրթա գումբանիալարըլլա պիրլէշմիլ տիր : Պունլարըն թէքմիլ սէրմաեէ վէ ինթիեաթ ազէսի 100, 000,000 Փրանզը կէշէր :

Թէքմիլ Թիւրքիա աճէնթէսի

ՊԻՐԼԷՇՄԻՇ

ԵԱՆԿԸՆԱ ԳԱՐՇԸ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

Սէմաեէ

Ինթիեաթ ազէսի 1888 Յունիսէ գատար

Սէնէվի իրատ 1888 Յունիսէ գատար

Փրանզ 8,000,000

Փրանզ 4,817,262

Փրանզ 10,069,700

Մէղքիւր գումբանեալար տէրօղիթօլար վէ խանէլէր վէ անլէր իչինտէ պուլունան մալլէր վէ մօպիլեալարը զանէթ ԷճՁայանէի վէ սուհուլէթլէ , թէէմիլնաթ գալիեհէ թանթընտա օլարագ սիկուրթա իտէլլէր :

Իսթանպուլ , Պահճէ-գարու , Եօրկիատիս խան Իսթանպուլ , Պահճէ-գարու , Եօրկիատիս խան ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱՏՈՒՐ

Խալիւմաթ .— Շիրքէթլէրիմիլին Տէրիտատէթ պանքէրլէրի պուլունան ներսէսեան Բէտէր վէ Խալիւմաթ Էֆէնտիլէր , հիսապը կէօրիւմիւշ , վէ միւտիլիեթի ումուլիեհէ թարաֆընտան թաստիգ օլունմուշ հէր կիւնա զարար ու զիեանը թաղմինէ թէմամիլլէ թալիմաթ ախզ իլլէմիլլէր տիր :

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Յօժիչ — Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Հանդիսի տպարանէն ի լոյս ընծայուեցաւ Մեծ. Մ. Մամուրեան էֆէնտիի սոյն նոր և բազմապատկեր ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, մաքուր տպագրութեամբ և գեղեցիկ կազմով:

Փոքր մանուկները, որք քերականը աւորտելէ յետոյ չունենին իրենց կարողութեան յարմար ընթերցանութեան գիրք մը, ահաւասիկ սոյն պատկերազարդ ԸՆԹԵՐԿԱՐԱՆն պիտի ունենան այսուհետև, որով մէջ պիտի գտնեն փոքրիկ պատմութիւններ, ոտանաւորներ, հանելուկներ, պիտանի գիտելիքներ, որք գեղեցիկ կերպով դասակարգուած են աստիճանաբար:

Կը յանձնարարենք Մեծ. դաստիարակաց, սոյն ԸՆԹԵՐԿԱՐԱՆն, որով պակասը բաւական ժամանակէ ի վեր զգալի եղած էր և զոր կը լեցնէ բազմազմուտ ուսուցիչն:

Կեդրոնատեղին է Հանդիսի տպարանն և կը գտնուի ամեն Հայ գրավաճառատ քով: Գինն է 2 զրշ. Շատ գնողներու գոացուցիչ զեղջը ը լինի:

ՃԱՇԱՐԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Պատիւ ունիմք ծանուցանել մեր բաղձաթիւ յաճախորդաց և Արգոյ հասարակութեան թէ շատերու ստիպմանց և փափաքանցը համաձայն, այս անգամ, մեր ի Ղալաթիա Վոյվոտաի դիմացը, արդէն ունեցած ճաշարանէն զատ, վերոյիշեալ անուամբ ուրիշ ճաշարան մը եւս հաստատած եմք Ղալաթիոյ մաքսատան դէմ,

Գէօղէ օղլու խանին տակ, թիւ 69:

Իրենց այցելութեամբը զմեզ պատուել բարեհաճող ազնիւ յաճախորդք, կերակրոց ընտրութեան, մաքրութեան և գնոց ածնութեան նկատմամբ մեր տարած հոգն ու խնամքը տեսնելով և գնահատելով խիստ գոհ ըլլալնին աներկբայելի է:

ՏԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԱՃԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն Շ Ա Ն Պ Է Ր Պ Է Ռ Ե Ա Ն

ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մ. Չ Ա Մ Ի

Այս նշանաւոր ատամնաբոյժն, որ ասկէ առաջ, Ամուրջի Պօլոյ կոյմը, Քիւլլեքեան զեղարանին վրայ իւր արհեստը ի գործ դնելով մեծ համբաւ և յաջողակութիւն ստացած էր, տեղի ունեցած հրդեհին պատճառաւ իւր գործատունը փոխադրած է այժմ Բերա, մեծ փողոց, Պօմարչէի կից թիւ 1 տանը, ուր, ըստ առաջնոյն պատրաստ է իրեն դիմող յաճախորդներն դարձանել ու գոհացնել ըստ ամենայնի:

Յաճախորդաց հանգստութեան համար մասնաւոր սենեակներ կազմուորած և արհեստին վերաբերեալ նոր գործիքներ յատկապէս բերել տալով, իւր գործատունը նախկինէն աւելի ճոխ և կատարելագործեալ գիրքի մը վերածած է:

Օ Գ Ր ՈՒ Ա Ս Ա Ն

ԿԱԼԱԹԱ ԵՒԻՔՍԷՔ ԳԱՆՏՐՈՐՄՏԱ ՎՈՅՎՈՏԱ ԳԱՐԺԸՍԸ ՆՕ. 94

ԹԵԼԵԿՐԱՖ

Պու. քէրքէ Էվրօբատան պիզէ կէլէն սօն մօտա էսպապլար իշիւն եիւզտէ 40 էքսիեիւնէ սաթըլմագ իւզրէ սըրըրշ օլունմուշ տուր:

ՖԻԵԱԹԼԱՐ

Բէտէնլիթ քօսթիւմ ֆառօնէ	Փրանք	30	Բարթէսիւ շայաք վէ տիւզ րէկ ֆրանք	3
Պօնժուր քօսթիւմ ֆառօնէ	»	46	Բանթալօն շըզկըլը	» 10
Պօնժուր քօսթիւմ րէնկի ճըզկըլը	»	32	Քօսթիւմ տիւզ րէնկ կիւմիւշիւ վէ թի.թիւն րէնկի	» 35
Քօսթիւմ ճըզկըլը շայաք	»	25	Բանթալօն չիֆթէ շըզկըլը	» 15
Քօսթիւմ շայաք տիւզ լաճիվէրտ վէ սիեաճ	»	30	Եէլէ 40բիքէ	» 8

